



Ապրիլի 20-ին Հունգարիայի Սեգեդ քաղաքում, Հունգարիայի հայկական համայնքի ջանքերով, տեղի է ունենալու հայերի համար պատմական իրադարձություն, որն իր հետքը կթողնի պատմության մեջ. Դրոմ հրապարակում տեղադրվելու է Հայոց Մեծ Եղեռնի և Սունգայիթի զոհերին նվիրված խաչքար:

Դեռևս նախորդ տարվանից այս գաղափարը կար, երբ Սեգեդ- Չանադի մարզի եպիսկոպոս՝ Կիշ Ռիգո Լասլոն խնդրանքով դիմեց Հունգարիայի հայկական ինքնավարությանն օգնելու իրականացնել իր՝ հայ ժողովրդի վիշտը որևէ կերպ կիսելու վաղեմի երազանքը: Ինչպես նշեց Հունգարիայի հայկական ինքնավարության փոխնախագահ Նիկոլոս Հակոբյանը, որ իրենց համար այդ խնդրանքը մեծ պատիվ էր և միայն հարգանքի էր արժանի: Բնականաբար, ջանք չխնայելով, ամեն կերպ փորձեցին իրականացնել այս միտքը, չնայած որ Հունգարիայի նման պետությունում որոշակի քաղաքական բարդությունների հետ էր կապված: Համայնքի ղեկավարները նշում են, որ անկախ նրանից, թե Հունգարիան Եվրոմիության երկրներից է, այնուամենայնիվ թուրքամետ է և վերջին տարիներին գտնվում է Ադրբեջանի լուրջ ազդեցության տակ:

